Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891. 99
Ս - 88

ՅՈՎ. ՍՏԵՓԱՆԵԱՆ
Հրատ. „Ցոլխանարգի“

# ՎԱՄՊԻՐՆԵՐԻ ԶՈՀԸ

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐԱ“
1904

5554u

12 MAR 2011

Բաղդասարի Հայոց
Մեսրոպեան Դպրոց
(Գանձակ) Ալեք.-Ծխակ. Կոչեցեալ

0 6 AUG 2013

891.99
Ս-88

237

ՅՈՎ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

# ՎԱՐՊԻՐՆԵՐԻ ԶՈՀԸ

1001/3837

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Պ.Ա.-Публичная Библиотека
7.XI—1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ„
1904

36013

# ԶՈՔ ՎԳԱՅԳԱՐՍՅԱՆ

Дозволено Цензурею. Тифлисъ, 19 Января 1904 г.



## ՎԱՍՊԻՐՆԵՐԻ ԶՈՀԸ

### I.

Ոգեշունչ առաւօտ էր. շառագունած հորիզոնի ծայրում ցցուած Բուրխանի անտառապատ ու կանաչազարդ գագաթի լանջից ծագած արևը փայլփլում էր կրակի պէս և իւր հրատապ ջերմութիւնը սփռում չորս բոլորը։ Իսկ այնտեղ, արևելքում՝ ձիւնապատ Քիրսի կատարն է սպիտակին տալիս։ Բնութիւնից անուշաբոյր ծաղիկներով պարգևագրուած դաշտերը քաղցր բուրմունք էին ցնդում անապակ օդում։ Երկնային երգիչների խումբը վաղուց արդէն հրաշագեղ, վառվռուն հնչիւններով լցուած, պատրաստուել էր հրապուրելու երազներով յագեցած մարդկանց։ Մանկական մրքի անոյշ յիշողութիւնները, կրակոտ պատանու հաճելի երևակայութիւնները, ջահել ամուսինների սիրահարական դէմքերը, բոլորը, բոլորը կարծես թէ միացած իրար հետ զուգորդական

թելերով, ներկայացնում էին մի քաղցրաբուրվոյ հարմանիայ, որ դրդում էր անհատին էլի քնել, արբենալ խաբուսիկ երազներով։ Հրաշալի՜ օր . . . ասես թէ բնութիւնն իւր բոլոր գեղեցկութիւնների ցուցահանդէսն էր բացել՝ անցողական անհատին յափշտակելու իրենով. մի հանճարեղ վրձին պէս պէս գոյներով շռայլօրէն զարդարել էր ու ներկել բնութեան պատկերները։ Ա՜խ, այդպիսի օրերն ինչո՞ւ հազուագիւտ են. տես ի՞նչպէս է կենդանացել արար աշխարհը. նայիր, ողորմելի մարդ, նայիր այն չքնաղ պանորամային ու հրճուիր, ափշիր, զմայլուիր։

Առուները քչքչալով, վշվշալով վազում են դէպի ձորակները. ահա այնտեղ բարձրացաւ փրփուր, աղայակ . . .

Կու-կու-ռի-կո՜ւ, լսուեցին գիւղի աքլորների զիլ հնչիւնները։ Սոխակներն իրենց գեղգեղանքներով արդէն համակել էին երանաւէտ երջանկութեամբ մանկական փափուկ սրտերը։ այդ անմեղ արարածներն, որոնք կարծես ստեղծուած են մարդուս սփոփելու, հիացնելու համար, տեսնելով զմայլուած պատանիների ժպիտը, աւելի էին ոգևորւում և թևիկներով սրբում իրենց գնչիկներն ու ապա ուրախ ու-



րախ նորից արձակում իւրեանց խորհրդաւոր, կրկնան ձայները։

Ահա գիւղական խրճիթների երդիկներից թանձր, մռայլ ծուխը քուլա-քուլա բարձրանալով խառնւում է երկնային անհուն ովկեանի վառ ծիրանագոյն ամպերի հետ, կարծես կամենալով չքացնել երկնային թագաւորութեան հրաշալի տեսարանները, բայց իզո՞ւր, — ծխի խուրձ-խուրձ շերտերը շղարշ-շղարշ կլանւում էին երկնքի հրաբորբոք ծոցում և բնութիւնը յաղթանակը տանում էր . . .

Ահա ճռնչալով կրնկի վրայ բացուեցին գիւղական խրճիթների ու «ղարերի» [1]) դռները. աղջիկ ու կին, տղամարդ ու երեխայ ժրատերես դիմեցին դէպի եռանդուն կեանքը։ Տաւարածներն հրկար մահակները վերցրած դռնէ դուռ ընկած՝ հաւաքում էին գիւղի տաւարը, որ տանեն արօտ։ Կովերի բառաչիւնը, ոչխարների մայիւնը, այծերի մկկոցը, գոմշուկների արձագոցը, օրօրոցում օրօրուող մանկիկների ճիչն ու աղաղակը միախառնուելով թռչունների դայլայլիկների հետ, կարծես կազմում էին մի անհասկանալի նուագարան, որի

[1]) Ցանկապատ բակ, ուր տաւարն են պահում։

զանազանակերպ եղանակները բարեհնչում, ներդաշնակում էին մի գեղանի զերբնական կոյսի նազելի մատների քնքոյշ բաղխումներով։ Ամենուրեք բուրմունք, բաղցրաէտութիւն, հրապոյր—կեանքը մարմնացած կենդանութիւն, մարդիկ աշխատասիրութեան կենդանի արձաններ, որոնց գլխաւերև կենսատու, ճաճանչափայլ արեգակը տաղ ջերմութիւն էր բաշխում երկրագնդին։

Տան-դօ, տան-դօ, տան-դօ . . .

—Հնչուեց եկեղեցու բակի ծառից կախած զանգակի մելամաղձիկ զողանջիւնը։

Զափահաս մարդիկ և ամուրի երիտասարդներ ու աղջկերք, մի ոտը գերեզմանի շեմքին դրած ծերունիներ ու պառաւներ, հաստ ու բորդ գաւազաններին յենուած, զողզողջ քայլերով դէպ՝ եկեղեցի դիմեցին։ Ժամերգութիւնն, Աստուած ժամերգութիւն համարի, վերջացաւ, գիւղական քահանան մեծ բանալով կողպեց Աստուծոյ տան դուռը և գրեց լայն դրպանում և երկար սև գաւազանով շրխկացնելով «եխծու բարերին», [1]) քայլերն ուղղեց դէպի շինամէջն։

[1]) Եխծի-եկեղեցի



## II.

Շէնամիջում Օհան «քեօխան» [1]) և Մարկոս «սուդիան» վճիռներ էին կայացնում, դատաստան անում։ Մարդիկ հետզհետէ համախմբւում էին հրապարակում։ Ամենը հետաքրքրութեամբ շարժուած էին։ Տէր Ավանէսն էլ եկաւ բազմեց դատաւորի աջակողմում, նահապետական շարդախի վրայ ի շարս վերոյիշեալների։ Քննեցին մի շարք հերթական հարցեր, մի քանի գանգատաւորների գործեր. գիւղի երրորդութիւնն առհասարակ հաշտարար դատաւորի դեր էր կատարում, բայց այդ էժան չէր նստում գիւղացիներին. նրանք ուղղակի անամօթութեամբ պյոկում, օրը ցերեկով կողոպտում էին այդ «որսերին» «թեփռում» [2]) նրանց, զորս դու պատուիրեցեր։

—Այս բոլորն իր կարգին, ասաց տանուտէրը համարեա բղաւելով, բայց պէտք է և վերջ դնենք այն «լաչառ» [3]) աղջկայ արարմունքներին։ Անցեալ օրը բալի «բեհը» [4]) տա-

[1]) Տանուտէր։
[2]) Փետրում։
[3]) Լպիրշ, լրբենի։
[4]) Իբրև գրաւական տրուած կանխիկ վճար։

լու համար գնացել էի Ղ. . . թրքաբնակ գիւղը և վեր էի եկել իմ «քիրվա» [1])Քալբալահի Մէկտու մօտ։ Ճաշի ժամանակ խօսք պատուեց հայերի ու թուրքերի փոխադարձ յարաբերութիւնների, երկու հարևան ազգերի նիստ ու կացի մասին և յայտնուեց այն միտքը, թէ արդեօք կարելի է որ թուրքը հայ աղջիկ առնի կնութեան կամ հայը թրքուհուն։ Ես յայտնեցի, տէրտէր ջան, ինչպէս դու միշտ ասում էիր, որ «զայդպիսի գրան զարգելի զեկեղեցին մեր» և երբէք չի կարելի իրագործուած տեսնել այդ գաղափարը, վասն զի հայերը միշտ նրանց «մուռտառ» [2]) անուանելով, հեռու կը պահեն իրենց ու կը խորշան այնպէս, ինչպէս թուրքը խոզի մսից։

Պորտաբոյծ, վամպիր Օհանը խորամանկութեամբ ստում էր իմարկէ. նա ընդհակառակն ասել էր, որ դա անխելքութիւն է, մեշիդը և եկեղեցին մի նպատակի են ծառայում, երկուսն էլ «զտուն զԱստուծոյ» կոչուին, ինչպէս ուսել էր տէրտէրից։

Գիւղի երեք ներկայացուցիչները չը տեսնուած ճարպիկութեամբ ու հմտութեամբ գիտէին տիրապետել «երկու երեսանի» լինելու

[1]) Մտերիմ ծանօթ
[2]) Զզուելի, կեղտոտ



բոլոր կարգերին ու կանոններին. թուրքերի շրջանում իրենց ամենալայն աշխարհայեցողութեան տէր «փոսմոպոլիտներ» [1]), իսկ հայերի մօտ ամենամսլեռանդ «չոլինիստներ» [2]) էին ցոյց տալիս իրենց. ոչ մի հանգամանք նրանք ձեռքից բաց չէին թողում առանց չահուելու. «կաշին փոխում» էին պայմանների ու տեղին համեմատ, նրանց համար գոյութիւն չունէր ազգ, կրօն, հայրենիք։

—Շատ միամիտն ես, Օհան քեօխա, ասացին ինձ թուրքերը հռհռալով. ձեր հայերն այդքան էլ պինդ չեն իրենց հաւատի մէջ, որքան դուք էք կարծում. մանաւանդ հայ աղջկերքն ուզղակի հայիշ-մայիշ են լինում մեր ջահել տղոց վրայ. հրէն Աբբաս Գուլու որդու, «իգիդ» [3]) Ալիշի վրայ սիրահարուել է ձեր Հ. . . գիւղացի Խէչանէնց Վանէսի «թառլան» [4]) աղջիկ Գիւլիզարը և խօսք է տուել փախչել Իրանի հողն ու կենակցել նրա հետ։

—Օրումս գեռ այդքան խայտառակ դրութեան մէջ չէի ընկել. աւելի լաւ կը լինէր գետինը պատռուէր, ես մէջը մտնէի. դուք ստում

[1]) Համամարդկային գաղափարների տէր, համաշխարհաքաղաքացի։
[2]) Կայր, թթու ազգասէր։
[3]) Քաջ։
[4]) Քնքոյշ, նազելի։

էք, այդպիսի բան չը կայ ա՛յ թուրքեր, հայ աղջիկը թուրքին չի սիրիլ — ասացի. բա մենք գարի ենք ուտում, որ այդպիսի բան թոյլ տանք մեր խնամակալութեան ներքոյ գտնուող հասարակութեան մէջ, էյ ինձ ձեռք էք առել, ինչ է. ասացի ես գլխիս զոռ տալով, որ մեր պատիւը պաշտպանեմ։

Այդ ժամանակ «աշնիս» [1]) տան դուռը բացուեց և ներս մտաւ վերոյիշեալ Ալիշն երգելով։

Ինձ սիրում է հայ աղջիկը,
Թառլան, թառլան հայ աղջիկը.
Նա պիտ՝ փախչէ ինձ հետ Իրան,
Թև պիտ՝ առնենք, փախչենք Իրան . . .

—Լաւ, լաւ, կը ծերանաս, այդքան տխուր եղանակով մի երգիլ, գիտենք որ կարօտել ես անտման Գիւլիզարին, ընդմիջեցին թուրքերը, դու էն ասա թէ ինչպէս ճանկեցիր նրան մարագումը։

Է՜հ, ինչ պատմեմ. «բուսը» պահեցի, [2]) երբ նա կալի մէջ հաւարում էր յարդն, ածում մարագը. հայրն եղներին տարաւ ջուր տալու, այդ ժամանակ երեք անգամ շուացրի, նա ճանաչեց իմ ձայնը, շուռ եկաւ դէպի իմ կողմն,

[1]) Մտերիմ ծանօթ։
[2]) Եռեցի



ես դէպի յետեւից, դարան մտած տեղից դուրս եկայ թէ չէ.—գիրկս նետուեց և մի քանի եր ջանիկ բոպէներ անցուցինք։

—Ինչ կասէք, Օհան քեօխա, դիմեցին ինձ թուրքերը. ես մնացի պապանձուած, մի լաչառի համար գլուխս քարշ գցած, սեերս. էլ չըկարողացայ համբերել, գլուխս ցաւից այրւում էր, ձին թամբել տուի ու «չափարաղ» [1]) տուն դարձայ։

Վերջացրեց իր այնքան հմտութեամբ հնարած պատմութիւնը և խորհրդաւոր ակնարկներ նետեց տէրտէրի ու դատաւորի պլպած աչքերին, վերջիններս ամեն ինչ հասկացան ու դերերի մէջ մտան. տանուտէրի լռելուց յետոյ անմիջապէս սկսեցին։

Սպշել էր հասարակութիւնը. մի ընդհանուր քսփսոց բարձրացաւ.

—Մեր սուրբ կրօնն ոտնակոխ է արել, մեր պատիւը ձգել մուռտառների մէջ, մեզ հողի հետ հաւասարեցրել, պէտք է արժանի պատիժ տալ այդ յանցագործին, տեղից վեր կենալով, ձեռքով չփելով թաւ միրուքն,—ասաց քահանան.

— Անպատճառ, անպատճառ, այս ինչ խայտառակութիւն է, վրայ բերաւ հաստափոր դատաւորը։

[1]) Արագ քշելով։

Այդ երեք անձից է կախուած գիւղի ճակատագիրը. ամեն մի վճիռ, որ նրանք են տալիս, ամեն մի խօսք, որ նրանց բերանից է դուրս գալիս՝ սուրբ է և անքակտելի գիւղական համայնքի համար։

—Էհ, դէ շուտ գնացէք այդ լիրբ աղջկան բերէք այստեղ դատաստանն անենք, զուռաց տանուտէրը։

—Շուտ, շուտ, գործ ունենք, էդ լաչառը մեր գործերը խանգարում է։

Հ . . . գիւղի հասարակութեան անյայտ չէր, որ Օհան քեօխի որդի «պլուտ» [1]) Բուղդանը գալով Բ . . . քաղաքից, ուր վատնել էր իւր ֆիզիքական ու հոգեկան ոյժերը՝ դեղխ ու շուայտ կեանքին տրուելով,—հարանեխութեան ուղարկից շատ և շատ գիտուն տատմէրների ու բաւթառների Խեչանէնց Վանէսի տունը, Գիւլիզարին մատանի առաջարկելով, բայց միշտ էլ մերժուեց. «Վանէսը պլուտին աղջիկ չունի տալու»—բացատրում էր ընդմիշտ ծերունի հայրը։

Համանուն քաղաքումն էր և Վանէսի մեծ որդի Սարգիսը նրա «օջաղի սիւնը». բախտը նրան ժպտաց, կարողացաւ մի հարուստ առևտրականի մօտ գործակատար մտնել և իր հաւա-

[1]) Փչացած վարքի տէր։



տարմութեամբ ու ընդունակութեամբ տէրերի որտերն շահել, նրանց «աչքի լոյսը» հանդիսանալ։ Սարգիսը մի կարգին, բարոյական տղայ էր, պարտաճանաչ ու հաւկացող։ Մինչդեռ համագիւղացի պլուտ Բուղդանի համար ծիսապաշտութեան կարգն էին անցել թղթախաղութեան, փողի երկրպագութեան անհաշտ, չարամիտ կրքերի աշխարհի մէջ տիրող մթնոլորդի նիստ ու կացը, կարգ ու կանոնները և նա խունկ էր ծխում այդ կեանքի պաշտամունքին ու բուրվառով դիմում դէպի զաղրելի ստրութեանց, անառակութեան, ուփանքներով լեցուն վայրերը,—շնորհունակ Սարգիսն առաւօտից մինչև երեկոյ իր գործին հաստատ աշխատում էր, իսկ ազատ ժամերին փրկարար ընթերցանութեամբ պարապում և՝ փող վաստակում և՝ շնորը, և՝ մարմինն ապահովեցնում և միտքը հարստացնում։ Նա մէկը հանդիսացաւ այն եջանիկ, հաղուագիւտ բացառութիւններից, որ իրեն հեռու պահելով վատնող, փուչ անբարոյական մարդկանց շրջանից, բռնեց կեանքի ուղիղ ճանապարհը, գիտակցեց կեանքի ստոյգ նպատակը, ընդգծեց իրեն համար հեռաւոր նպատակակէտ, թէպէտ հէնց միայն իրեն անձին շահեկան նպատակակէտ, այլ ոչ հանուրին և բուռն տենչանքով օրստօրէ ձգ-

տում էր իրագործել այն, ի կատար ածել իւր փափագները։ Նամուսաւոր Սարգիսը հոր օջախը չէնացնելու համար եղաւ հէնց առաջին քայլից. շուտ—շուտ փող էր փոխադրում մեծ գումարով և զանազան արդ ու զարդեր ուղարկում տան և քրոջ համար։ Վանէսը միշտ պարծենում էր, որ Սարգսի պէս որդի ունի, և իրաւունք էլ ունէր։ Ժամանակի ընթացքում հնադարեան «դարագամի» [1]) տեղը բարձրացաւ մի երկյարկանի գեղեցիկ ճաշակով շինուած տուն, պատշգամբաւոր ու լուսամուտներով, լայն բակից տարած բարեայ սանդուղքով, թիթեղեայ տանիքով, խողովակներով։ Ամենքը նախանձում էին Վանէսին և ամեն մի անգամ նրա տան մօտով անցնելիս մատով ցոյց էին տալիս և գլխները տրմբտրմբացնելով ասում. «ա՛յ ինչ ասել է նամուս, նամուսաւոր տղայ, ափարի՛մ, ափարի՛մ» [2])։

Քեօխի տղայ «մալբուն» [3]) Բուղդանը, այդ ոտքից մինչև գլուխ մաքուր հագնուած դիակը, որի մէջ ամեն մի զգացմունք մեռել էր, նմանւում էր մի սատկած կապիկի կմախքի, որին կարող էինք ճանաչել միմիայն անատոմիական փորձերի միջոցով։ Դժոխային դէմ-

[1]) Նահապետական տուն, երդիկը կտուրից հանած։
[2]) Կեցցէ, ապրես։
[3]) Անպէտք։



քի վրայ կար մի զոյգ աչքեր, որոնց ապուշային հայեացքն արտայայտում էր մեռելութեան, անշնչութեան պատկերացումն։ ոտները, նոյն իսկ հագնուած, էլի ծուռ ու մուռ էին երևում և նա տատանուելով, կարծես ոտը գետնին չը դնելով էր քայլում։ Տարտարոսի զաւակը, տեսնելով որ իւր բախտի թները փըշրուեցին, ջլատուեցին ու բայբայուեցին իւր թէ մարմնական և թէ հոգեկան ոյժերը, տեսնելով իր կարծեցեալ հրապոյրները փոխուած դառն թոյնի, ծծում, քամում են նրա հիւթերը, հրապոյրների վարդերը տատասկների փոխուած, ծակծկում, հալ ու մաշ են անում նրա միտքն և ուղեղը, դարձրած մահաշունչ թոյնով լեցուն բաժակ, որի հեղուկը փրփրում է, եփւում, եռում, — իբրև մի կենդանի մեռեալ չնչասպառութեան վայրերից դիմեց դէպի իւր ծննդավայրը, այն ծննդավայրը, որից նա ամբողջ տասը տարի հեռացած էր։ Գալով գիւղ, իբրև կայծակնահար մարմին թաւալգոր եղաւ մահճի մէջ, բայց գիւղի օրհնեալ կեանքը մի թարմութիւն փչեց, մի զգաստութիւն տուեց նրան և իբրև մի հիւանդ կրիայ, մի խայթող օձ, նա մահճից դուրս եկաւ և երազում էր՝ հոր խրատն լսելով, ընտանիք կազմել, էլի գնալ այն աշխարհը, ուր կանայք շատ կան, բայց

ընտանիք, զաւակ չունին . . .

— «Պապի, եթէ Սարգիսիդ սիրում ես, եթէ ես քո որդին եմ, աղաչում եմ, պաղատում, որ քրոջս չանբախտացնես, չը տաք բեօխվին տղին, էն պլուտին, ոտրից մինչև գլուխ հիւանդ, «սատկած ջամդարին» [1]), մեղքի տակով կը լինենք, մեր քրոջը մեր ձեռքով գերեզմանում դրած կը լինենք. զգուշացէք, չը խաբուէք, թէ բեօխի տղան է, մեծաւորի հետ բարեկամութիւն կը կապենք. իմ քրոջն ես ինքս իմ ձեռքովս պէտք է մարդու տամ, մի շնորքին, համեստ մարդու, թէպէտ չունևորի, բայց խելքը գլխումն, իւր հալալ աշխատանքով ապրող մի երիտասարդի. այդպիսին ես 'ի նըկատի ունեմ արդէն. տարուայ վերջին ես և մեր ապագայ փեսացուն կը գանք գիւղ. ես վճռել եմ գիւղից այլ ևս յետ չը գնել ոտս, այլ մինչև կեանքիս վերջը մնալ այնտեղ, ուր մանկական օրօրոցս է օրօրուել։ Վերջին անգամ եմ կրկնում, չը խաբուէք երբէք» — այսպէս գրում էր Սարգիսը Բ . . . քաղաքից, որտեղից երբ դէպի գիւղ ճանապարհուեց «սատկած ջամդարն»։

— Աղա գնացինք տունը, էն աղջիկը հիւանդ պառկած է, — զոռզոռացին տանուտէրի

[1]) Լէշ



ծառաները. փոքր եղբայրն է տանը, մէկ էլ քաւթառ Սանամը. աղջկայ հայրը գնացել է Շ . . . «ճոթ» [1]) առնելու իրենց նոր խանութի համար, որ էս ամառ մեծ տոյան գայ մէջը նստի։

— Հա՜, գիտենք այդ ինչ հիւանդութիւն է, «չունը լակոտ է ցնկնելու» [2]), — ասացին հռհռալով գիւղի երեք ներկայացուցիչները։

— Գնացէք, զոռով վեր կացրէք տեղերից և մէջքին տալով այստեղ բերէք այդ չանը, — հրաման արձակեցին նրանք։

1001
3834
Հ. Ս. Ղ. ՊՈՒՇԿԻՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Ս. Ղ. ՊՈՒՇԿԻՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

## III

Սրանչելի ընութեան գրպիսի երկայրի հակադիր պատկեր, բարի երկնքի տակ հրէշ մարդիկ ինչեր չեն արտադրում։

— Ես ցոյց կը տամ Խէչանէնց Վանէսին. նա իր զոռզոռութեան պատիժն կը ստանայ ինձնից և այնուհետև թող նստի ու մի կլուխ լաց լինի, այլ ևս ուշ, բանը բանից անցած պրծած կը լինի. թող նա իմանայ, որ իրեն վրայ էժան չի նստիլ տանուտէրի տղային աղ-

[1]) Զիթենէն.
[2]) Ծնելու։

ջիկ մերժելը,—ասաց մտքումը վամպիր Օհանն։

Ահա երկու ձեռքերը թոկով ամուր կապկապած, իբրև մի ոճրագործ մեղադրեալի, բերում են թշուառ Գիլիզարին։ Տանուտէրի ծառաներն անպատկառ հայհոյանքներ են թափում նրա հասցէին։ Գիլիզարի յուզուած, դալուկ դէմքի վրայով կայլակ—կայլակ արցունքի շիթեր էին հոսում. նուազած, բայց կրակոտ աչքերի մէջ մերթ փայլում էր անմեղութիւն, մերթ բարկութեան հուրը։ Նա չը գիտէր ուր են տանում իրեն. այդ րոպէին նա մոռացել էր աշխարհն ու մարդկանց, մի անյայտ զգացում պաշարել էր նրան։

— Կանգնեցրէք հրապարակի մէջ. իւրաքանչիւրը թող գայ թքէ երեսին, — գոռաց տանուտէրը։

Գիլիզարն արձանացել էր, ապուշ կտրել. նա այդ ժամին նմանւում էր գոհելու բերած մի հեզ գառան, թեերը կտրտած մի անմեղ աղաւնու։

— Է՜հ, ասա՛ տեսնենք լաչառ, ինչո՞ւ է թուրքը քեզ սիրում. հայը կտրուել էր գլխիցդ, որ գնացել ես թուրքի հետ սիլի—բիլի անում, —ասաց դատաւորը։

— Ախ՜ ես թուրքի չեմ ճանաչում, ինչո՞ւ էք ինձ տանջում, — հեծկլտաց Գիլիզարը։



— Լիրը, անզգամ, դու դեռ սուտ էլ ես խօսում. մտրակներով և ճիպոտներով զարկեցէք սրա մէջքին ու ոտներին. իմանում էիր ծածկու�ած կը մնաս։

— Ախ՜ ինչո՞ւ էք ինձ ծեծում, ես մեղաւոր չեմ . . .

— Անամօթ, այսչափ «խալիսը» [1]) սխալուեց, դու ես ուզում մեզ ճշմարիտը սովորեցնել, հա, գիտեմ փորիդ ցաւը. դու ամաչում ես քո արածից։

— Եարաբ Աստուած, իմ ո՞ր մեղքիս համար են ինձ տանջում, փոթորթում . . .

Խփեցէք դրան ճիպոտներով, զարկեցէք մտրակով, զոչում էր տանուտէրը։

— Ո՞վ է տեսել այսպիսի չար բաներ, ժամանակը հոտել է, հոտել, —քրթմնջում էին ծերերը զայրացած. նրանք հաւատացել էին, որ այդ աղջիկը ոտնակոխ է արել իւրեանց սուրբ հաւատը, իրենց պատիւը ձգել է, ինչպէս դատաւորն էր բարբառում։

Գիլիզարը հարուածների ներքոյ կծկւում էր, գալարւում, հեծկլտում, հառաչում՝ կիզիչ, ողորմած արևի տակ՝ անողորմ, դազան մարդկանց լարած թակարդի մէջ խճճուած։

— Պապի, աղբէր ջան, տատի, աղատե-

1*) Ժողովուրդ։

ցէք ինձ այս հրէշներից. մորթում են— ինձ, սպանում են, հա՜ օգնութեան հասէք . . . անմեղ մայրիկ, անսիրտ մայրիկ, ինչու գնացիր հողի տակն ու սիրած «բալիդ» [1]) թողեցիր անպաշտպան գիշատիչ գայլերի ճիրաններում. մայրիկ, անողորմ մայրիկ, չես լսում խեղդուող, շարշարուող բալիդ լացն ու կոծը, մայրիկ . . .

— Բաւական է, — բղաւեց տանուտէրը գաղանացած. դու խօսք ես տալիս, որ այսուհետև Թուրքի չես սիրիլ, նրա հետ յարաբերութիւն չես ունենալ։

— Սարգիս ջան, աղիզ աղբէր, հասէ՛ր, քրոջդ խեղդամահ են անում ողջ-ողջ. ապա որ օրուայ համար ես աղբէ՛ր ջան . . .

Սարգիսի հէրն էլ անիծեմ, քո հէրն էլ. աւելի սաստիկ խփեցէք այս անպատկառին, հրաման տուաւ տանուտէրը։

Գիւլիզարը ուժաքամ եղած փռուեց կետնի վրայ . . .

«Ձախորդ օրերը ձմրան նման . . . . . .
Կուգան ու կերթան» . . .

Ամբոխի մէջ մի բշփշոց բարձրացաւ. գիւղի ներկայացուցիչները մնացին շուարած։

[1]) Զաւակ։



## IV.

Մի գեղեցիկ, երկարահասակ երիտասարդ, մաքուր երոպական տարազով հագնուած, մատով նշան տուաւ երգեցող աշակերտութեան յառաջ ընթանալու իսկ ինքն, աւագ ուսուցիչ Գարեգինեանն ամբոխի մէջը պատռելով եկաւ կանգնեց գիւղական դատարանի առջև. նա հետաքրքրութեամբ, զարմանքով պաշարուած, սպառնական հայեացքը դարձրեց դէպի գետնին փռուած աղջիկը, ապա կրակոտ բարկութեամբ պլկած աչքերով զննեց ոտից ցգլուխ դատաւորին ու տանուտէրին, որոնք իրենց պաշտօնի մէջ մարմնացած էին։ Դրանք երկուսն էլ իրենց պղնձէ «մեդալները» կախած, անթարթ աչքերով, որպէս սովայուկ գայլեր՝ դիտում էին չորս բոլորքը.

Երիտասարդը խրոխտ, ազդեցիկ ձայնով դարձաւ ներկայացուցիչներին և ասաց։

— Ինչու համար էք ծեծել այս թշուառ աղջկան, հաւ էք մորթում, ինչ է։

Ա՜հ, բարև ձեզ վարժապետ, ինչպէս էք, վարժապետ ջան, սա լաչառ է, սիրեց Թուրքին

և նրա հետ յարաբերութիւն ունեցաւ. պէտք էր դաս տալ սրան և տուինք էլ, այն էլ հրապարակով, որպէսզի խրատական օրինակ ծառայի ամենքին։

— Եւ այս բոլորն արել է մեր գիւղի հայ աղջիկը՞, չէ՞, ես չեմ հաւատում։

— Վարժապետ ջան, բա մենք սխալուած ենք։

—Այդ ես չը գիտեմ, բայց որքան ճանաչում եմ հայ աղջկան ընդհանրապէս և մեր գիւղի հարևանիս աղջկան մասնաւորապէս, — այդպիսի բան սպասել անկարելի է։

— Չէ՞ վարժապետ ջան, բա մենք երեխայ ենք։

— Լաւ, վկաներն ո՞վքեր են։

— Ի՞նչ վկաներ, ամբողջ գիւղը քեզ վկայ։

Օրինակ մէկը ցոյց տուր, որ վկայի, թէ իսկապէս այդ աղջիկը շնացող է, — ասաց զայրացած գիւղական ուսուցիչը, ձեռայփայտը գետնին զարնելով.

— Հէնց մէկն ես,—ասաց դատաւորը։

— Նախ և առաջ դու դատաւոր ես, իրաւունք չունիս վկայ լինելու, երկրորդ՝ դու ի՞նչ ես տեսել սրանից։

— Ես «դարաւլ» չէի քաշում, որ տեսնէի. իմ պաշտօնակից ընկերս՝ Օհան քեօխան



յանդիմանութիւն է ստացել թուրքերից այդ լաչառի համար. բոլոր թուրքերն այդ գիտեն և «մուխտարմազ» [1]) չինած բերնէբերան երգում են, թէ ինչպէս մի թրքի լակոտ փախցրել է այս անզգամին. դրանով, վարժապետ ջան, ընկնում է ամբողջ ազգի պատիւը և դուք, որպէս ազգային շահերի պաշտպան, կարծեմ մեր ճակատիցն էլ դեռ կը համբուրէք, որ չարին, մեզ անպատուողին այդպէս պատժել գիտենք։-

— Ուրեմն այդպէս, դու ոչինչ չես տես, սել և հաւատում ես քո պաշտօնակցին։

— Ապա ո՞ւմ պիտի հաւատամ։

— Սիրելի ժողովուրդ, ձեր մէջ գուցէ կան անձնաւորութիւններ, որոնք մի բան ունեն ասելու, որ և է վկայութիւն ունին տալու առանց ճնշուելու թող դուրս գան այդպիսի ներն ու համարձակօրէն յայտնեն, — բարձրաձայն գոչեց ուսիցիչն՝ աչքերը շուռ ածելով չորս կողմը։

— Սա ուրեմն ի՞նչ է ուզում ասել, վկաները էք ցանկանում՝ տասով, քսանով բերեմ, թէ՞ հայ և թէ՞ թուրք, — փորձեց գոռալ տանուտէրը վարժապետի ներկայութեամբ։ Մեզ ձեռք էք առել, ինչ է. ա՛յ «էլլիգ» [2]), դուք

[1]) Ոտանաւոր երգ։
[2]) Հասարակութիւն, համայնք։

լսեցիք իմ վերև բերած պատմութիւնն, ապա ինչու էք լռում. այստեղ որքան որ մարդ կայ, ուրեմն այնքան էլ վկայ կայ։

— Այո, շատ ճիշտ է. այդ բոլորը վկայ կարող են լինել, որ դուք ձեր յիշած պատմութիւնն էք արել իրենց ներկայութեամբ, բայց սրանք ինչպէս կարող են վկայութիւն տալ, հիմնուած ձեր պատմութեան վրայ, որ իսկապէս այդ աղջիկն փուչ վարքի տէր է, կատարուած իրողութիւն է այն, ինչի մէջ դուք դատապարտում էք թշուառին, որին այսպէս անգթօրէն տրորել էք, գաղանին յատուկ կատաղութեամբ։

— Սա ինչ է ասում, ինչեր է բրդում, մէկմէկու նայելով յուսահատական ու բարկացկոտ ձայնով խօսեցին գիւղի երկու ներկայացուցիչը։

— Պարոն վարժապետ, բա դուք էսքան խալխի վճիռը ջուրն էք գցում, բա սրանք խոտ են արածում. «հալբաթ»[1] ճշմարիտ է, որ այդպէս են վարուել, որպէսզի չը լծողնեն վատ օրինակ ծառայի։ Ես կարծում եմ, որ դեռ պատուելիներն արժանի են մի առանձին շնորհակալութեան, — յանդգնութիւն ունեցաւ

[1]) Երևի։



ընդմիջելու տանուտէրի մեծ եղբօր որդի «խոջա»[1] Կարապետը։

— Ի՞նչ էք կոտրած գդալի պէս մէջ ընկնում. փիլիսոփայութիւնդ քեզ համար պահիր, քեզ էլ ենք ճանաչում, գիտենք ինչ բարի պտուղն ես։

Կարապետ խոջան էլ մրթմրթալով հեռու քաշուեց։ Վամպիրները չփոթուած էին, այլայլուած. նրանց գրութիւնը նախանձելի չէր։

— Մեր հարևանի աղջիկ Գիւլիզարն, որին դուք մերձիմահ էք արել և որի համար ձեր արժանի պատիժն կը ստանաք մօտիկ ապագայում, — մեր մահուանից յետոյ ահա մի ամիս է, ինչ որ հիւանդ պառկած է կրած հոգեկան վշտից, որտնեպուլիւնից. քանի՞ անգամ հէնց ես ինքս եմ քաղաք գնալիս գերեզմանատան ճամբով անցնելիս տեսել որ այդ աղջկան մօր գերեզմանաքարի վրայ ընկած երեսն՝ի վայր լալիս է դառնագին. այդքան էլ անխղճութիւն. անգութ գազաններ, անկշտում վամպիրներ, ձեր անձնական շահերի համար ի՞նչ ստորութիւններ էք՝ի կատար ածում։ Ես ստոյգ գիտեմ այս եղեռնագործութեան պատճառը։ Սարգսի գրած նամակն ես ինքս եմ անձամբ կարդացել, սիրելի եղբայրակիցներ, ձեզ խարում

[1]) Առնտրական։

են ձեր կեղծ բարերարներն, որոնք իրենց ստոր կրքերին յագուրդ տալու համար չեն խըղճահարւում մինչև անգամ կեանքից զրկելու մի մատաղ կուսի. Վանէս ապէրն իւր աղջիկը չէ ուզում տալ քեօխի տղային, պլուտ Բուղդանին և իրաւունք էլ ունի. բայց Օհան քեօխան այդ անպատուութիւն է համարում իրեն համար և օրը ցերեկով սպանել է տալիս մի թոյլ, անպաշտպան աղջկայ, առարկելով որ վերջինս փուչ բարքի տէր է. սուտ է այդ բոլորը, շինծու, հնարովի միանգամայն։ Այդ վրէժխնդրութիւն է, անզգուստ ոխակալութիւն . . . . . .

—«Ագգերի գլխին փորձանքները կ'ուզան ու կ'երթան» . . .

Լսւում էր հեռւում զիլ ձայների վերջին մարուող երգերը։

Գիւլիզարն արդէն վարժապետի կարգադրութեամբ տուն էր փոխադրուել և մահճում դրուել. խեղճի մարմինն ամբողջովին կապտել էր ու սառել, փայտացել. նա մերձիմահ էր։

Գիւղի վամպիրները անենկատելի կերպով, շրջապատուած իրենց ծառաներով, փախուստ էին տուել չինամէջից,-իրենց համար լաւ հետեւանք չնախատեսելով։

— Քո լեզուին մատաղ, մեզ սպանեցին, մեր տները քանդեցին անիրաւները. — գէգերս



կրակեցին,—այգիներս չորացրին անջուր թողնելով, —հունձս փչացրին,—ծառերս կտրտեցին. —մինուճար բալիս զինուոր ուղարկել տուին ուրիշի տեղ,—ինձնից հարկը եռապատիկ, չորեքպատիկ ստացան.լծկան եզներս պարտքի տակոսի տեղ յափշտակեցին . . . . . զորն ասենք, զորը թողնենք, —գոչում էին հասարակութեան միջից, մէկ այստեղից—մէկ այնտեղից։

Երիտասարդ վարժապետը, նկատելով վամպիրների փախուստը, զայրացած բացականչեց. —«հեռու կացէք ինձնից, ստոր հոգիներ, կեղծ, դիմակաւորուած բարերարներ» . . . . . .

—Վարժապետ, ազատեցէք մեզ այս տնաքանդներից, ի սէր եղբայրութեան, ի սէր Աստուծոյ . . . . .

—Գլխիդ, արևիդ մատաղ . . . . Դուք էք մեր բարեկամը, վարժապետ . . . . Թող կորչին անիրաւները, կորչին . . .

Ցաւարը հանդից տուն է գալիս, բեղարած մաճկալն ու չարքաշ հոտաղը քրթնաթոր ճակտով հանգիստ առնելու են դիմում. ոլոանջում է լալահառաչ զանգակը, տիրում է տխրամած դիշեր. իսկ՝ պարտքի տակին ճնշուած գեղցին, թշուառացած այրին՝ սև երդիկի սև ծխի հետ նզովք, անէծք դէպ՝ մութ երկնին ուղարկում են անվերջ, անհետ . . .

* * *

## V.

Կիրակի օր էր. Հ . . . գիւղի եկեղեցու բակը լցուած էր հասարակութեամբ. մարդիկ երբեմն—երբեմն գլխները շարժելով փսփսում էին մի ինչ որ բան, էլի մնում անձայն, կրկին ու կրկին մի մեռելային անդորրութիւն էր տիրում, կրկին նրանք խորհրդաւոր կերպով շշնջում էին . . .

Գիւղի գերիզմանատան ճամբով հէնց նոյն այդ միջոցին գիւղի երկու գազաններն էին գնում՝ տանուտէրն ու դատաւորը՝ ձեռք ու ոտքը շղթայակապ. գաւառական ոստիկանապետն ոստիկաններով շրջապատուած նրանց տանում էր մօտակայ Շ . . . քաղաքը, որ արժանի պատիժն ստանան . . .

Տղամարդիկ ու կանայք դուրս խուժեցին փոքրիկ եկեղեցուց. մի անցուորական «ղարիբ» տէրտէր խոժոռած դէմքով, հանդարտ բայլելով, թաղման շարականը սկսեց խիստ տխուր ու մելամաղձոտ ձայնով։ Ամբոխը դադարը շրջապատելով ծանր ու համրօրէն յառաջ էր ընթանում. ամբոխը ինքնամոռացութեան քնի մէջ



էր. կարծես տիրել էր մի անասնային թմրութիւն. ննջեցեալի բարեկամ կանայք ապիրողորմ վայնասուններով թնդեցրին օդը։

Այդ ժամանակ ամբոխի մէջը պատռելով յառաջ գնաց մի ջահել, բարձրահասակ երիտասարդ և ընկնելով իր սիրած քրոջ դագաղի վրայ, սաստիկ հեկեկաց. արցունքը հեղեղի պէս թափւում էր նրա սև աչքերից։

—Քոյրիկ, աղիզ քոյրիկ, աննման քոյրիկ, տարիներով երեսիդ կարօտցած եղբայրդ, քո Սարգիսն առջեդ կանգնած է, ապա ինչու չես բանում քո անուշ, բլբուլ լեզուդ, եղբօրդ հետ զրուցում. դու ասում էիր, որ շուտ դամ գիւղ, բախտաւոր ապրենք. աչքս կուրանար, ոտս կոտրուէր, ականջս խլանար, չը կարողանայի գալ տեղ հասնել, լսել այս վայնասունը ապիկտոր լացն ու շիւանը։ Անունիդ մեռնեմ. Աստուած, քո բարի երկնքի տակ այսպիսի անխիղճ, քուրդ մարդկանց ինչպէս ես պահպանում . . . Օհան քեռիս, տունդ կրակուի, մէջն այրուիս, խորովուիս ողջ-ողջ, փոշի մոխիր դառնաս . . . անխղճմտանք սիրտդ տեսնեմ կատաղած շան բերանում կրծկրծուելիս, մարմնդ քծքծուելիս . . .

Մի ամրակազմ, զառամեալ ծերուկ, որի ճակատն ամբողջապէս ծածկուած էր արտի ակօս-

ներին նմանուող խորշոմներով, լալիս էր խզուած ձայնով. նրա ծնկերը ծալում էին, դրա համար երկու ձեռքից ամուր բռնել էին, որ վայր չընկնի

Աղջիկս, Գիւլիզար ,ոտս կորուէր քաղաք գնացած չը լինէի. ա՜յ իմ գայլերի ճանկ ընկած միանուագար աղջիկ, ապէզ բալա. տա՛ր, տար բեզ հետ և ինձ, զառամեալ ծերունուս. քեզնից յետոյ ես էլ ինչու ապրեմ, խղճա՛ ինձ, խղճա, տար բեզ հետ, տա՛ր . . .

Դազաղը հասել էր գերեզմանատան. ահա ննջեցեալին գրին յաւիտենական ցուրտ կացարանում. իւրաքանչիւր մարդ մի-մի բուռը հող ձգեց վրան ասելով՝ Աստուած հոգին լուսաւորի . . .

Օրը մթնեց, վրայ հասաւ պաղ, ցրտաշունչ գիշեր։

Չինչ երկնքի լայնածիր ծոցում լուսինը բակ էր կապած, իսկ նրա շուրջը շարան—շարան ճաճանչում էին հեզիկ, մարմանդ աստղերը. լուսնեակ թագուհու հարսանեկան հանդէսն էր. նրան փառաբանելով պսակում էին լուսատու, հրաշափառ նաժիշտները. կախարդիչ պատկեր, իսկ պատկերի տակ բեզարած, խղճուկ, վիզը ճուկ գիւղն է նիրհում, առժամ դադար առնելով դառն աշխատանքից . . . . . .



Գիւղն ընկղմուեց խորունկ քնի մէջ. «ծծուող ու քամուող» մարդիկ՝ ջերմեռանդ աղօթքների մրմունջներ վեր առաքելով դէպ արդարադատ Բարձրեալն, աչքները փակեցին։ Հայ գիւղացին ապշած աչքերով հանդիսատես եղաւ հրէշ մարդկանց արարմունքներին, վամպիրների զոհին։

* * *

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏԻ. ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Միայն գրքերում խոսուն կամ մեռած «ցեղաց ու բառաց» տակից ընդմիշտ ազատվում է մի մարդ, որի ոգեղեն դիմագիծը ամբողջ դիմագծերը դարձնում է մի ուրախ դիմագիծ։ Հարգանքս ուղարկում եմ Ամենայն Հայոց կաթողիկոսին։ Հայ գրագետներ, ազգային գործիչներ, հանգիստ դիմեցեք։

* * *

«Ազգային գրադարան»
NL0360672

56013